Հրաձգության հանրապետական մրցումների կանոնակարգը

Մրցույթն անցկացվում է 2021թ. մարտ ամսին՝

1) պետական մարմիններ՝ մարտի 22-23-ը,

2) տեղական ինքնակառավարման մարմիններ՝ մարտի 25-26-ը,

3) մրցույթն անցկացվելու է «Ասպար Արմս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հրաձգարանում (հասցեն՝ ք. Երևան, Արաբկիրի վարչական շրջան, Մամիկոնյանց փողոց, շենք 60/1), կամ Երևանի հրաձգության հանրապետական մարզադպրոցում:

Մրցույթն անցկացվում է թիմային և անհատական հաշվարկով:

Մրցույթում հաղթող է ճանաչվում առավել բարձր արդյունք ցուցաբերած մասնակիցը:

Միավորների հավասարության դեպքում մրցանակային տեղը տրվում է շատ 10 միավոր խոցող մասնակցին: Բացարձակ հավասարության դեպքում տրվում է լրացուցիչ մեկ կրակոց:

Մրցույթի ընդհանուր թիմային հաշվարկը որոշվում է թիմի անդամների ձեռք բերած միավորների առավելագույն գումարով: Հավասար արդյունքի դեպքում առավելությունը տրվում է թիմերի մասնակիցներից բարձր արդյունք ցուցաբերած մասնակից թիմի օգտին:

ՄՐՑՈՒՅԹԻ ԾՐԱԳԻՐԸ

Մրցույթն անցկացվում է հրաձգության միջազգային ֆեդերացիայի կանոնակարգի համաձայն՝ 9 մմ «Մակարով» տիպի ատրճանակից, թիրախը՝ № 4ա կրծքային, թիրախի հեռավորությունը կրակագծից՝ 25 մ, կրակոցների քանակը՝ 3 փորձնական և 5 հաշվարկային կրակոց, կամ Մրցույթը անցկացվում է օդամղիչ հրացանով:

ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄԸ

Թիմային հաշվարկով 1-ին, 2-րդ և 3-րդ տեղերը գրաված տղամարդկանց և կանաց թիմերը պարգևատրվում են գավաթով և հավաստագրերով:

Մրցույթի 1-ին, 2-րդ և 3-րդ տեղերը գրաված անհատները պարգևատրվում են մարզահագուստով, գավաթներով, մեդալներով, հուշանվերներով և հավաստագրերով, իսկ 1-ին տեղերը գրաված մասնակիցները (տղամարդ և կին) պարգևատրվում են նաև օդամղիչ զենքով: